
ԱԼԵՔՍԱՆԴՐԱՊՈԼԻ, ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ
ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ ՀԱՅ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՁ

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈՒՅԱՆ

Խորհրդային պատմագրությունն իր գոյության 70 տարիների ընթացքում պատմաքաղաքական և կուսակցական բնույթի հսկայական գրականություն է ստեղծել: Այդ գրականության նպատակը ոչ միայն և ոչ այնքան պատմական ճշմարտության վերհանումն է եղել, որքան հակախորհրդային-հակակոմունիստական ուժերի դեմ գաղափարախոսական ճակատում պայքարելը: Հասկանալի է, որ խորհրդահայ պատմագրության քննադատության գլխավոր թիրախը եղել է ՀՅԴ կուսակցությունը և նրա գործունեության հետ կապված պատմության հիմնահարցերը: Խորհրդահայ հեղինակներն աշխատություններ են գրել պատմության դաշնակցական նենգափոխումների ու խեղաթյուրումների վերաբերյալ, սակայն իրականում տարվելով գաղափարաքաղաքական կույր քննադատությամբ՝ ավելի հաճախ հենց իրենք են աղավաղել ու ծուռ հայելու մեջ ներկայացրել հայոց քաղաքական պատմության շատ հիմնահարցեր: Մյուս կողմից գիտական անաչառությունը պահանջում է նշել, որ սփյուռքի հեղինակները ևս երբեմն շրջանցել են իրենց կուսակցությունների անցյալին վերաբերող ոչ հաճելի փաստերը և փորձել են գունագարդել դրանց պատմությունը: Այստեղից հետևում է, որ կուսակցական-հատվածական նեղ շահերը և գաղափարաքաղաքական անհանդուրժողականությունը երբեք չեն կարող նպաստել պատմագիտության զարգացմանը, անցյալի պատմական ճշմարտության վերհանմանը:

Այս իմաստով հայոց նորագույն շրջանի պատմության վիճելի, քաղաքական գնահատականի տեսակետից պատմագիտական բարդ ու իրարամերժ հիմնահարցերից են մեր ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող երեք՝ Ալեքսանդրապոլի՝ 1920 թ., Մոսկվայի և Կարսի՝ 1921 թ. պայմանագրերի պատմագիտական քննությունը: Հարկ է նշել, որ այդ երեք պայմանագրերի միջև կան ընդհանրություն և ներքին օրգանական կապ, ուստի դրանք ներկայանում են որպես պատմագիտական մեկ ամբողջական հիմնահարց: Միաժամանակ փաստենք, որ թեև Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի խորհրդաժողովների ու կնքված պայմանագրերի պատմության շուրջ ստեղծվել են բավականաչափ, հաճախ հակասական գնահատականներով հարուստ աշխատություններ, սակայն պատմագիտական առումով մինչ օրս դրանք հարկ եղած չափով չեն վերլուծվել ու գնահատվել: Անգամ պատմագիտության ճանաչված մասնագետ Շ. Հարություն-

յանի՝ պատմագիտության զարգացմանը նվիրված վերջին ուսումնասիրության մեջ շրջանցվել է այս թեման¹:

Քննության առնվող վերոհիշյալ պայմանագրերը պատմագիտական վերլուծության ենթարկելու համար՝ դրանց շուրջ ստեղծված գրականությունը կարելի է խմբավորել երեք մասի՝ խորհրդային, սփյուռքի և հետխորհրդային: Այդ պայմանագրերի մասին խորհրդային և ոչ խորհրդային (սփյուռքի) հեղինակների կողմից բավականաչափ գրվել է, հետխորհրդային վերջին՝ 10–15 տարիներին ևս այդ մասին դարձյալ գրվում է, որովհետև ուժով պարտադրված, անարդար այդ պայմանագրերը վերագնահատման ու վերաիմաստավորման կարիք ունեն:

Խորհրդային տարիներին Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերին ամենից ավելի հանգամանորեն անդրադարձել են Բ. Բորյանը, Ջ. Կիրակոսյանը, Գ. Գալոյանը, Է. Ջոհրաբյանը, Ա. Եսայանը, Մ. Արզումանյանը, Ս. Ալիխանյանը և ուրիշներ, սփյուռքից՝ դաշնակցական գործիչներ՝ Ս. Վրացյանը, Ալ. Խատիայանը, Հ. Տեր-Հակոբյանը (Բրազեկ), Գ. Լազյանը, նախկին դաշնակցական Շ. Նաթալին, Ջ. Մարրյանը և ուրիշներ, իսկ հետխորհրդային մի երկու տասնամյակում՝ Լ. Խուրշուդյանը, Հր. Միմոնյանը, Գ. Գալոյանը, Վլ. Ղազախեցյանը, Է. Ջոհրաբյանը, Ե. Սարգսյանը, Կ. Սարդարյանը, Հ. Ազատյանը, Ռ. Ղազանջյանը և ուրիշներ²:

Հայ ժողովրդի համար 1920–1921 թվականները ռազմաքաղաքական տեսակետից ճակատագրական եղան: 1920 թ. գարնան-ամռան ընթացքում տեղի ունեցան ռուս-թուրքական մերձեցում և, ըստ էության, գործարք: Խորհրդային Ռուսաստան-

¹ Շ. Ռ. Հ ա թ ո լ թ յ ո լ ն յ ա ն. Պատմագիտության զարգացումը Խորհրդային Հայաստանում 1964–1988 թթ., Երևան, 1990:

² Բ. Ա. Բ о р ь я н. Армения, международная дипломатия и СССР. Ч. II, М.–Л., 1929, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), Ջ. Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972, Գ. Ա. Գ ա լ ո յ ա ն. Պատմության քառուղիներում, Երևան, 1982, ն ո լ յ ի՝ Հայաստանը և մեծ տերությունները (1917–1923), Երևան, 1999, Է. Ա. Զ ո հ ր ա բ յ ա ն. Սովետական Ռուսաստանը և հայ-թուրքական հարաբերությունները (1920–1922 թթ.), Երևան, 1979, ն ո լ յ ի՝ 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, Երևան, 1997, Ա. Ե ս ա յ ա ն. Հայաստանի միջազգային իրավական դրությունը (1920–1922), Երևան, 1967, Մ. Վ. Ա թ զ ո լ մ ա ն յ ա ն. Արևալիքից վերածնունդ, Երևան, 1973, Ս. Ս. Ա լ ի խ ա ն յ ա ն. Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917–1921 թթ., Երևան, 1966, Ս. Վ Ր ա ց յ ա ն. Հայաստանի Հանրապետություն, Բեյրութ, 1958, Ա լ. Խ ա տ ի ա յ ա ն. Հայաստանի Հանրապետության ծագումը և զարգացումը, Բեյրութ, 1968, Հ. Տ ե Ր - Հ ա կ ո բ յ ա ն (Բ Ր ա զ ե կ). Հայաստանի վերջին աղետը, Կ. Պոլիս, 1921, Գ. Լ ա զ յ ա ն. Հայաստան և Հայ դատը. Երևան, 1991, Շ. Ն ա թ ա լ ի. Երեք դաշնագիր. – «Արարատ մատենաշար», թիվ 25, Բեյրութ, 1957, Ջ. Մ ս Ր Ր լ յ ա ն. Երեք դաշնագրեր (Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի դաշնագրերը 1920–1921 թթ.), Բեյրութ, 1979, Լ. Ա. Խ ո լ ը ը ո լ յ ա ն. Հայաստանի բաժանումը 1920 թվականին, Երևան, 2002, Հ Ր. Մ ի մ ո ն յ ա ն. Ողբերգության պահին. – «Գարուն», 1989, -4, Վ լ. Ղ ա զ ա խ ե ճ յ ա ն. Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, Ե. Ղ. Մ ա թ զ ա յ ա ն. Դավադիր գործարք, Երևան, 1994, Կ. Մ ա Ր Պ ա Ր յ ա ն. Պատմություն և իրականություն, Երևան, 1991, Գ. Գ. Ա Յ ա տ յ ա ն. Судьбоносные договора. Ереван, 2000; Բ. Կ ա Յ ա ն ճ յ ա ն. К вопросу об оценке Московского русско-турецкого договора 1921 г. — Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XX, Երևան, 2001, «Правда Армении», 6. XI. 1998; 14. XI. 1998; «Голос Армении», 26. IV. 2001, և այլն:

նի գիտությամբ և լուր համաձայնությամբ 1920 թ. աշնանը քեմալական Թուրքիան հարձակվեց Հայաստանի Հանրապետության վրա: Հայաստանը ծանր պարտություն կրեց, և նրա տարածքները բաժանվեցին Թուրքիայի ու Ռուսաստանի միջև: Նախ Թուրքիան 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետությանը - պարտադրեց թուրքական «Ազգային ուխտի» ոգուց բխող Ալեքսանդրապոլի պայմանագիրը, որը, սակայն, այդպես էլ չվավերացրեց ո՛չ Հայաստանը և ո՛չ էլ Թուրքիան: Այնուհետև մի քանի ամիս անց՝ 1921 թ. մարտի 16-ին, Ռուսաստանը և Թուրքիան, առանց Հայաստանի գիտության ու մասնակցության, Մոսկվայում կնքեցին մի պայմանագիր, որը, տարածքային-սահմանային առումով, փաստորեն, կրկնում էր Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Իսկ նույն թվականի հոկտեմբերի 13-ին Կարսում Խորհրդային Հայաստանի պատվիրակությունը պարտադրված ստորագրեց մի պայմանագիր, որով, ըստ էության, վավերացվում և օրինականացվում էին Մոսկվայի պայմանագրի սկզբունքները: Ալեքսանդրապոլի պայմանագրի ստորագրումը պարտադրվեց խորտակվող Հայաստանի Առաջին Հանրապետության պատվիրակությանը: Մոսկվայի պայմանագրով Ռուսաստանը ճանաչեց Թուրքիայի տարածքային ձեռքբերումները Հայաստանի հաշվին՝ «Ազգային ուխտի» սահմաններով, իսկ Կարսի պայմանագրով Խորհրդային Հայաստանը՝ ուժի և կուսակցական կարգապահությունը պահպանելու պարտադրանքով ընդունեց Մոսկվայի, ասել է թե՛՝ Ալեքսանդրապոլի պայմանագրի սահմանները:

Հայտնի է, որ խորհրդահայ պատմագրության մեջ ամենածանր որակումներ են տրվել Ալեքսանդրապոլի պայմանագրին՝ ստորացուցիչ, նվաստացուցիչ, ստրկացուցիչ, հրեշավոր, դավաճանական, ոճրագործական և այլն³: Եվ, իրոք, այդ որակում-գնահատականները հիմնականում տեղին են ու արդարացված: Սակայն ամեն ինչում չէ, որ կարելի է համաձայնվել խորհրդահայ պատմաբանների ու կուսակցական-պետական գործիչների մեկնաբանություններին ու գնահատականներին: Օրինակ՝ ՀՄԽՀ Ժողովրդի Նախագահ Ս. Լուկաշինը 1922 թ. հունվարի վերջին ՀԿԿ առաջին համագումարում կարդացած քաղաքական զեկուցման մեջ արտահայտել է այն միտքը, թե դաշնակների կողմից Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումը եղել է տակտիկական քայլ, որպեսզի Խորհրդային Ռուսաստանը ներքաշեն քեմալականների հետ պատերազմի մեջ⁴: Սակայն Լուկաշինի այս դատողությունն այնքան հիմնադրվել ու մտացածին էր, որ հետագայում դրան տուրք տվողներ չեղան, և այն տեղ չգտավ անգամ խորհրդահայ պատմագի-

³ Լ. և Ն. Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 455, Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, Երևան, 1967, էջ 111, Ս. Տ. Ա լ ի ի ս ու յ ա ն. Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում 1917-1921 թթ., Երևան, 1966, էջ 252, Մ. Պ. Ա դ ա յ ա ն. Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից, Երևան, 1976, էջ 796, Գ. Ա. Գ ա լ ո յ ա ն. Պատմության քառուղիներում, էջ 354, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում 1828-1923 թթ., էջ 775, Բ. Ս. Օ հ ա ն ջ ա ն. Դաշնակցությունն առանց դիմակի, Երևան, 1980, էջ 153, Հ. Ր. Ս ի մ ո ն յ ա ն. Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը, Երևան, 1986, էջ 530 և ուրիշներ:

⁴ Հայաստանի ազգային արխիվ (այսուհետև՝ ՀԱԱ), ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 1:

տության մեջ: Որ Անգլիան կուզենար քեմալականներին ներքաշել Ռուսաստանի հետ պատերազմի մեջ, հասկանալի էր, բայց մանկամտություն կլինի կարծել, թե հայկական մի քանի գավառի համար Ռուսաստանը կպատերազմեր բնական դաշնակցի՝ Թուրքիայի հետ՝ իր դեմ հանելով մուսուլմանական աշխարհը: Ընդհակառակը, խորհրդային կառավարության համար ցանկալի էր նման պայմանագրի կնքումը, մի պայմանագիր, որի նախադրյալները հենց ինքն էր ստեղծել՝ սկսած Բրեստ-Լիտովսկի կողոպտիչ պայմանագրից մինչև 1920 թ. օգոստոսի 24-ի Մոսկվայի ռուս-թուրքական նախաստորագրված պայմանագիրը, որով Ռուսաստանը ճանաչում էր թուրքական «Ազգային ուխտը», այսինքն՝ Կարսի, Արդահանի և Բաթումի անցումը Թուրքիային⁵: Ալեքսանդրապոլի պայմանագիրը դյուրացրեց ու ճանապարհ հարթեց Մոսկվայի և նրա կրկնօրինակ Կարսի պայմանագրերի համար:

Բերենք պատմական փաստերի աղավաղման մեկ այլ օրինակ: Ալեքսանդրապոլի բանակցություններում Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Մդիվանու՝ որպես միջնորդի մասնակցության խնդրի շուրջ խորհրդային շատ հեղինակներ և առաջիններից մեկը՝ հայտնի բոլշևիկ Ա. Կարինյանը, զարգացնում են այն վարկածը, թե Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Խատիսյանի մերժման պատճառով է, որ թուրքերը հրաժարվել են Մդիվանու միջնորդությունից, և նույնիսկ Խատիսյանը հեռագրել էր Երևան՝ Հայաստանի կառավարության նախագահ Ա. Վրացյանին, որ Մդիվանու առաքելությունն այստեղ վնասակար է⁶:

Ա. Կարինյանն ու նրա տեսակետի հետևորդները երկու փաստ խառնել են իրար և աղավաղել պատմական իրականությունը. նախ, որ Խատիսյանը ոչ միայն դեմ չի եղել Խորհրդային Ռուսաստանի՝ ի դեմս Մդիվանու, բանակցություններին մասնակցությանը, այլ, ընդհակառակը, պնդել է, որ նա մասնակցի: Խատիսյանն իր հուշերում փաստում է, որ ինքը շատ ճիգեր է թափել, որ Ռուսաստանի ներկայացուցիչը մասնակցի բանակցություններին, բայց ապարդյուն. չի կարողացել փոխել թուրքերի վճռական դիրքը⁷: Սակայն դեռ բանակցությունները չսկսած՝ նոյեմբերի 24-ին, Քյազիմ Կարաբեքիրը Մդիվանու հետ ունեցած զրույցում ավելորդ է համարել վերջինիս մասնակցությունը բանակցություններին՝ պատճառաբանելով, որ հայերն արդեն ընդունել են իրենց բոլոր պայմանները: Ի դեպ, նշենք, որ խորհրդահայ պատմագրության, նաև սփյուռքի շատ հեղինակների մոտ տարածում գտած փաստական այդ կեղծիքը առաջիններից մեկը քողազերծել է Է. Ջոհրաբյանը⁸: Տեղին է մեջբերել հետաքրքրաշարժ այն դրվագը, երբ Խատիսյանը բարձրացնում է Մդիվանու՝ բանակցություններին մասնակցելու հարցը և ստանում Կարաբեքիրի մերժումը, մտավախություն է հայտնում, որ բոլշևիկներն իրեն չեն ների, որից հետո Կարաբեքիրը իբրև գաղտնիք պատասխանում է. «Դուք

⁵ Է. Ա. Ջոհրաբյան. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 141-145, Գ. Ա. Գալոյան. Հայաստանը և մեծ տերությունները..., էջ 265-266:

⁶ Ա. Կարինյան. Դաշնակցությունը փաստերի դեմ, Թիֆլիս, 1926, էջ 40:

⁷ Ալ. Խատիսյան. նշվ. աշխ., էջ 301:

⁸ Է. Ա. Ջոհրաբյան. Մովեստական Ռուսաստանը..., էջ 97, 134:

պետք է գիտնաք, պ. Խատիսյան, որ մենք նախապես համաձայնած ենք Մոսկվայի հետ՝ ստանալու Կարսի նահանգը, ավելին մեզ չեն տար, բայց եթե այժմ դուք չընդունեք մեր պայմանները՝ ես կը քալեմ ավելի առաջ, փույթ չէ թե վաղը ստիպված ետ դառնամ»⁹:

Ինչ վերաբերում է Խատիսյանի հեռագրին՝ Մղիվանու վնասակար գործունեության առնչությամբ, ապա այդ մասին խոսվում է նոյեմբերի 29-ին՝ այն բանից հետո, երբ Կարաբեքիրն արդեն հինգ օր առաջ մերժել էր Մղիվանու՝ որպես միջնորդի մասնակցությունը խորհրդաժողովին, և որից հետո վերջինս Ալեքսանդրապոլում պարզապես զբաղված էր խորհրդային իշխանության քարոզչությամբ: Դրա համար էլ Խատիսյանը հեռագրում նշում է, որ Մղիվանին այստեղ գործում է բացառապես իբրև կուսակցական՝ Հայաստանը խորհրդայնացնելու նպատակով¹⁰: Ինչպես տեսնում ենք, այս խնդրում նույնպես անտեղի է խորհրդահայ պատմագիր հեղինակների մեղադրանքը, թե իբր դաշնակցականները թույլ չտվեցին Խորհրդային Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությունը Ալեքսանդրապոլի բանակցություններին:

Անցած ժամանակաշրջանում Ալեքսանդրապոլի պայմանագրին տրված ծանր որակումներից գատ, փաստական այնքան աղավաղումներ ու կամայական մեկնաբանություններ են արվել, որ այդ պայմանագրի հողվածների ընդհանուր թվի վերաբերյալ անգամ չի եղել միասնական կարծիք: Տարբեր ուսումնասիրողների մոտ այն տատանվել է 14-ից 18-ի սահմաններում: Պայմանագրի ստույգ հողվածների թիվը 18-ն է: Բանն այն է, որ այն հողվածները, որոնք քիչ թե շատ իրավահավասար դրույթներ են պարունակել, միտումնավոր շրջանցվել են, իսկ երբեմն էլ պատմագիտական գրականության մեջ արձանագրվել են փաստեր, երբ պայմանագրի նախնական տարբերակը (նախագիծը) ներկայացվել է իբրև բուն պայմանագիր: Դրա պատճառը, հավանաբար, այն է, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչ մի կողմը չի վավերացրել և պաշտոնապես չի հրապարակել:

Այս տեսակետից բնավ իրականությանը չի համապատասխանում բազմավաստակ պատմաբան Լեոյի «Անցյալից» աշխատությունում զետեղված՝ Ալեքսանդրապոլի պայմանագրից քաղված հակահայկական հետևյալ ձևակերպումը. «Օսմանյան սահմանի մեջ հայ մեծամասնությունն ունեցող որևէ հողամաս չկա»¹¹: Մաթուրիմացություն է, որովհետև բուն պայմանագրում նման միտք չկա: Լեոյի վերը նշված «քաղվածքը» ընդամենը Ք. Կարաբեքիրի ներկայացրած պայմանագրի նախագծի պարզ վերարտադրությունն է, որն արտատպվել է Կ. Պոլսի ռամկավարների «Ժողովրդի ձայն» թերթից: Բանակցությունների ժամանակ Ալ. Խատիսյանին հաջողվել է հանել այդ կետը: Պայմանագրի ստորագրումից մեկ-երկու ամիս չանցած՝ արդեն ամենուրեք շրջող բամբասանքները հերքելու նպատակով Խատիսյանն այս մասին լրացուցիչ պարզաբանումներ է տվել Կ. Պոլսում լույս տեսնող

⁹ Նույն տեղում, «Ժողովրդի ձայն», Կ. Պոլիս, 24. II. 1921:

¹⁰ ՀԱՍ, ֆ. 4033, ց. 3, գ. 57, թ. 1:

¹¹ Լ. և ո. նշվ. աշխ., էջ 456:

«Վերջին լուր» թերթին¹²: Այդ մասին Խատիսյանը գրում է նաև իր հուշերում¹³: Սակայն պայմանագրի այդ նույն 3-րդ հոդվածում տեղ է գտել հակահայկական նմանաբնույթ բովանդակությամբ մի ձևակերպում, որ «սույն պայմանագրով Թուրքիային զիջվող շրջաններն ունեն անվիճելի պատմական, էթնիկական և իրավական կապ Թուրքիայի հետ»¹⁴: Այստեղ զարմանալ կարելի է պայմանագիրը ստորագրող հայկական պատվիրակության տրամաբանության և անպատասխանատվության վրա, որոնք կարող էին բացատրություն պահանջել թուրքական կողմից, թե, օրինակ՝ Մուրմալուն պատմաիրավական ի՞նչ կապ և ընդհանրություն ունի օսմանյան պետության հետ, երբ այն երբեք չի եղել նրա կազմում:

Ալեքսանդրապոլի պայմանագրի շուրջ խորհրդահայ պատմագրության մեջ տեղ է գտել նաև մի այնպիսի կեղծ դատողություն, թե իբր «դաշնակները, տեսնելով խորհրդային կարգերի հաղթանակը Հայաստանում, անդամահատեցին վերջինիս և նրա մի մասը՝ Ղարսի և Արդահանի մարզերը, Երևանի նահանգի Մուրմալուի գավառը դավաճանաբար հանձնեցին Թուրքիային»¹⁵: Մեջբերված քաղվածքից կարելի է հասկանալ, որ հանուն այն բանի, որ Կարսի և Արդահանի շրջանները, ինչպես նաև Մուրմալուի գավառը, որպեսզի խորհրդային չդառնան, դաշնակցականները դրանք հանձնում են Թուրքիային: Ինչ խոսք կարող է լինել այդ տարածքները միտումնավոր թուրքերին հանձնելու մասին, երբ թշնամին հենց Խորհրդային Ռուսաստանի կառավարության գիտությամբ ու թողտվությամբ զենքի ուժով էր գրավել և Ալեքսանդրապոլի պայմանագրով ստիպել այն ընդունել:

Խորհրդահայ պատմագրության մեջ տեղ գտած կեղծիքներից մեկն էլ այն է, որ դաշնակցական պարագլուխները 1920 թ. նոյեմբերի 30-ի լույս դեկտեմբերի 1-ի գիշերն իրենց գումարած հայտնի նիստում իբրև թե «որոշում են դաշնակցել Կարաբեքիրի հետ՝ ընդդեմ Սովետական Հայաստանի»¹⁶: Այնինչ այդ ճակատագրական նիստում մի կողմից ընդունվել է Բ. Լեզրանի վերջնագիրը Հայաստանի՝ խաղաղ ճանապարհով խորհրդայնացման, իսկ մյուս կողմից՝ Ք. Կարաբեքիրի վերջնագիրը հաշտության պայմաններն ընդունելու վերաբերյալ¹⁷:

Ալեքսանդրապոլի պայմանագրի կապակցությամբ խորհրդային պատմագրությունը միակողմանիորեն մեղադրել է Հայաստանի դաշնակցական կառավարությանը, որը, անշուշտ, ուներ մեղքի իր բաժինը: Բայց մյուս կողմից հարց է ծագում. իսկ ո՞վ Հայաստանին դրեց այնպիսի պայմանների մեջ, որ ստորագրի այդ ստորագուցիչ պայմանագիրը կամ ինչպես հնարավոր եղավ նման նվաստացուցիչ պայմանագրի ստորագրումը: Պատասխանն ակներև է. դա հնարավոր եղավ

¹² «Վերջին լուր», Կ. Պոլիս, 22. II. 1921:

¹³ Ա. ի. Խ ա տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 314:

¹⁴ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 63, թ. 15:

¹⁵ Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն. Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Երևան, 1948, էջ 11:

¹⁶ Ա. Ն. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Ընդդեմ պատմության դաշնակցական նենգափոխության. Երևան, 1976, էջ 46:

¹⁷ Ա. Հ ա կ ո բ յ ա ն. Հայաստանի խորհրդարանը և քաղաքական կուսակցությունները (1918-1920 թթ.), Երևան, 2005, էջ 326-327:

այն բանի հետևանքով, որ Խորհրդային Ռուսաստանն ուժ տվեց (ռազմական, ֆինանսական, քաղաքական, դիվանագիտական) քեմալականներին, որոնք էլ պարտության մատնեցին Հայաստանին և ուժի սպառնալիքով Հայաստանին պարտադրվեց Ալեքսանդրապոլի կողոպտիչ պայմանագիրը: Մինչդեռ խորհրդային պատմագրությունն անգիտանում է այդ եղելությանը և նման ծանր պայմանագիր կնքելու ամբողջ մեղքը բարդում դաշնակցական կառավարության վրա: «Իրականում, – գրում է Յու. Բարսեղովը, – Հայաստանին պարտադրված այդ կողոպտիչ պայմանագրի քաղաքական պատասխանատվությունը առաջին հերթին ընկնում է խորհրդային կառավարության վրա»¹⁸: Ե. Սարգսյանն անհերքելի փաստերով ապացուցում է, որ Հայաստանի վրա հարձակման քեմալականների պլանը նախօրոք համաձայնեցվել էր խորհրդային ղեկավարության հետ և ստացել նրա կողմից անվերապահ աջակցություն¹⁹: Խորհրդային ղեկավարությունը, փաստորեն, օժանդակեց քեմալականներին ՀՀ քաղաքական վերացմանը, իսկ անուղղակի նպաստեց նաև արևելահայ բնակչության մի մասի ոչնչացմանը: Ոչ լրիվ տվյալներով՝ թուրքերի կողմից օկուպացված արևելահայ շրջաններում կոտորվել է 198 հազար մարդ²⁰:

Խորհրդահայ պատմագրության և նույնիսկ հետխորհրդային մի շարք հեղինակների մոտ կարծրացած է այն սխալ վարկածը, թե իբր Ալեքսանդրապոլի պայմանագրով Հայաստանին մնում էր ընդամենը 10 հազար կմ² տարածք, որը հավասարվում էր Բաթումի պայմանագրով նախատեսված տարածքին²¹: Ասվածը չի համապատասխանում իրականությանը: Եթե խորհրդային շրջանում գաղափարախոսական, քարոզչական նպատակով ասվում էր այդպես, ապա դա մի կերպ հասկանալի էր, բայց որ մեր օրերում են ասում ու գրում Ալեքսանդրապոլի պայմանագրով ընդամենը 10 հազար կմ² Հայաստանի մասին, մեղմ ասած, արդեն անտեղյակության արտահայտություն է²²: Նման դատողություններ անելուց առաջ խորհուրդ կտայինք կարդալ Հայաստանի ժողկոմխորհի նախագահ, բոլշևիկ Ս. Լուկաշինի գեկուցումը 1922 թ. հունվարի 26-ին ՀԿԿ I համագումարում: Այնտեղ սևով սպիտակին գրված է, որ Մոսկվայի և Կարսի պայմանագրերը «գրեթե հին Ալեքսանդրապոլի պայմանագիրն» են²³:

¹⁸ Геноцид армян. Документы и комментарий, сост. Ю. Барсегов, Т. 2, М., 2005, с. 387.

¹⁹ Տե՛ս Ե. Սարգսյան. За кулисами. Как рождался Московский договор 1921 г.– «Литературная Армения», 1991, № 1, с. 76.

²⁰ Советская историческая энциклопедия. Т. 3, М., 1959, с. 487.

²¹ Հայ ժողովրդի պատմություն, հ. 7, էջ 111, Շ. Ռ. Հարությունյան. Հայ ժողովրդի պատմություն (1917–1968), հ. 4, Երևան, 1970, էջ 109, Ա. Եսայան, նշվ. աշխ., էջ 48, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 775, Մ. Վ. Արզումանյան, նշվ. աշխ., էջ 349, Հայկական համառոտ հանրագիտարան, հ. 1, Երևան, 1990, էջ 83:

²² Գ. Ա. Գալստյան. Հայաստանը և մեծ տերությունները..., էջ 376, «Առավոտ», 1. IX. 2001 և այլն:

²³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 1, թ. 3:

Վերջին տասնամյակում հայ պատմագրության մեջ առաջիններից մեկը Բ. Հարությունյանը սահմանային ճշգրտումներով ցույց տվեց, որ տարածքային-սահմանային տեսակետից Ալեքսանդրապոլի պայմանագիրը ոչնչով չէր զիջում Մոսկվայի, հետևապես և Կարսի պայմանագրերին²⁴: Ավելին, ինչպես տեղին է նկատել քարտեզագետ-պատմաբանը, Ալեքսանդրապոլի և Մոսկվայի պայմանագրերով գծված հայ-թուրքական պետական սահմանների համեմատական քննությունը ցույց է տալիս, որ Մոսկվայի պայմանագրով Հայաստանի հյուսիսարևմտյան սահմանագիծը (Ադրաբայի՝ ներկայիս Ամասիայի շրջանի ուղղությամբ) զգալիորեն տեղափոխվել է արևելք, այսինքն՝ Հայաստանին անցնող տարածքով և արդյունքում Ալեքսանդրապոլի պայմանագրով նախատեսված ավելի քան 250 կմ² մի եռանկյունի տարածք, որը պետք է մնար Հայաստանին, անցել է Թուրքիային²⁵:

Ալեքսանդրապոլի պայմանագրի գնահատման խնդրին, բնականաբար, անդրադարձել են սփյուռքի հեղինակները: Եթե ՀՅԴ գործիչները և պատմագիր հեղինակները (Ս. Վրացյան, Ալ. Խատիսյան, Հր. Տասնապետյան, Ռ. Փիրումյան և ուրիշներ) փորձել են հիմնավորել նման պայմանագրի կնքման պատմական անխուսափելիությունը, որ Ալեքսանդրապոլի պայմանագիրն ստորագրվել է՝ «հայ ժողովրդի ֆիզիկական գոյությանն սպառնացող մահացու վտանգից դրդված»²⁶, «սպառնալիքի և ճնշման տակ»²⁷, «իբրև հաղթող կողմից պարտվող կողմին բռնությամբ պարտադրված պայմանագիր»²⁸ և այլն, սփյուռքի ոչ դաշնակցական որոշ հեղինակներ (նախկին դաշնակցական Շ. Նաթալին, Զ. Մսրրյանը, Մ. Ավետյանը և ուրիշներ) խորհրդային պատմաբաններից ոչ պակաս ծանր որակումներ են տվել՝ «հայրենադավ և մաքսանենգ պայմանագիր», «Հայոց պատմության ամենանվաստացուցիչ դաշնագիր», «գերագույն դավաճանություն» և այլն²⁹:

Մոսկվայի պայմանագրի շուրջ հայ պատմագրության մեջ ստեղծվել է բավականաչափ գրականություն, մանավանդ որ իր նշանակությամբ ու խաղացած դերով սա նշված երեք պայմանագրերից համարվում է գլխավորը, որովհետև Ալեքսանդրապոլիինը իրավական ուժ չի ունեցել, իսկ Կարսինը համարվում է, ըստ էության, մոսկովյան պայմանագրի յուրատեսակ հավելվածը (կրկնօրինակը): Մոսկվայի պայմանագրին ևս տրվել են տարբեր, նույնիսկ հակադիր գնահատականներ: Եթե խորհրդային պատմագրությունը միանշանակ դատապարտում էր Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքումը և դրական գնահատում կամ, համենայն

²⁴ «Գիտության գլոբուս», 2001, թիվ 1, էջ 72:

²⁵ Նույն տեղում:

²⁶ Ս. Վրացյան, նշվ. աշխ., էջ 503-504:

²⁷ Ռ. Փիրումյան, Հայաստանը Հ.Յ.Դ.- բռնակցի հարաբերությունների ոլորտում 1917-1921, Երևան, 1997, էջ 295, «Վերջին լուր», 22. II. 1921:

²⁸ Ա. Ահարոնյան, Մարդարապատից մինչև Սևր և Լոզան (քաղաքական օրագիր), Բոստոն, 1943, էջ 110-111:

²⁹ Շ. Նաթալի, Երեք դաշնագիր, Բեյրութ, 1957, էջ 3, 12, Զ. Մսրրյան, նշվ. աշխ., էջ 82, Ս. Ավետյան, Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870-1920) հուշամատյան և գոր. Անդրանիկ, Փարիզ, 1954, էջ 231 և այլն:

դեպս, ըմբռնումով մոտենում Մոսկվայի ու Կարսի պայմանագրերին, ապա սփյուռքի հեղինակները, որպես կանոն, դատապարտել են հայ ժողովրդի թիկունքում կայացված այդ կողոպտիչ գործարքը:

Որպեսզի պարզաբանենք, թե խորհրդային պատմագրության մեջ ինչպես են լուսաբանվել ու գնահատվել Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերը, որպես ելակետ՝ հարկավոր է ցույց տալ, թե այդ նույն պատմաբաններն ինչպիսի վերաբերմունք ու գնահատական են տվել քեմալական շարժմանը և այդ պայմանագրերն ստորագրած քեմալական Թուրքիայի կառավարությանը: Եվ ամենին չպետք է զարմանալ, որ տասնամյակներ շարունակ խորհրդային պաշտոնական պատմագրությունն ընդհանրապես և խորհրդահայր, մասնավորապես, քեմալական շարժումը ներկայացրել են որպես ազգային-ազատագրական և նույնիսկ դեմոկրատական: Ինչպես և կարելի է ազատագրական որակել նվաճողական, շովինիստական, ջարդարարական մի շարժում, որն ուղղված էր հարևան ազգային փոքրամասնությունների՝ հույների, հայերի, քրդերի, ասորիների, արաբների և այլոց դեմ: Միայն այն փաստը, թե 1920 թ. վերջերին և 1921 թ. սկզբներին քեմալական զորքը ինչեր կատարեց Կարսում և Շիրակի գավառում, բավական է ապացուցելու այդ շարժման հետադիմական, թալանչիական, ջարդարար ու ցեղասպան էությունը: Այնինչ կոմունիստական կուսակցության և խորհրդային կառավարության հրահանգով խորհրդահայ պատմագրության մեջ ստորաքաշաբար ու կեղծավորաբար քեմալական շարժումը որակվել է որպես առաջադիմական, ազգային-ազատագրական: 1920-ական թվականների սկզբին հայ կոմունիստների առաջնորդ Ալ. Մյասնիկյանը գրում էր. «Խորհրդային Հայաստանի վերաբերմունքը դեպի քեմալիստները պետք է լինի բարյացակամ»³⁰: Այստեղից էլ կանխավ պարզ է դառնում, թե ինչպիսին պետք է լինեին խորհրդահայ պատմագրության վերաբերմունքը քեմալականների հետ կնքված պայմանագրերին՝ որպեսզի «մեր թուրք բարեկամները չնեղանան»:

Այս համատեքստում ծագում է մեկ այլ հարց, թե իրականում ով է նախաձեռնել Մոսկվայի ռուս-թուրքական երկրորդ խորհրդաժողովը: Խորհրդահայ պատմագրության մեջ տարածված է այն տեսակետը, որ Մոսկվայի խորհրդաժողովի հրավիրման նախաձեռնողը եղել է խորհրդային կառավարությունը³¹: Խորհրդաժողովի նախաձեռնության դափնին տրվում էր խորհրդային կառավարությանը, որպեսզի ցույց տրվեր, որ, իբր, խորհրդային պետությունը մտահոգ է եղել հայ ժողովրդի ճակատագրով՝ Հայկական հարցի լուծմամբ: Խնդրով զբաղվող հետազոտողներից մեկը, հենվելով ԽՍՀՄ արխիվային նորահայտ փաստաթղթերի ժողովածուի վրա, նշում է, որ «1920 թ. դեկտեմբերի առաջին օրերին ռուսական դեկավարությունը հրավեր ուղարկեց՝ քեմալականներին խորհրդա-թուրքական երկրորդ խորհրդաժողով հրավիրելու՝ լուծելու տարածքային և ուրիշ հարցեր»³²: Այնինչ, իրականում ոչ թե ՌՍՖՍՀ կառավարությունն է հրավեր ուղարկել Թուր-

³⁰ ՀԱՍ, ֆ. 4004, ց. 1, գ. 104, թ. 4:

³¹ Մ. Վ. Ա. ր. գ. ո. լ. մ. ա. ն. յ. ա. Դարավոր գոյամարտ, Երևան, 1989, էջ 550:

³² Р. К а з а н д ж я н. К вопросу об оценке..., с. 109.

քիային՝ Մոսկվայում ռուս-թուրքական խորհրդածոդով գումարելու վերաբերյալ, այլ 1920 թ. դեկտեմբերի 9-ին Անգորա ուղարկած համապատասխան հեռագիր-նոտայով համաձայնություն է տվել խորհրդածոդով գումարելու մասին³³:

Կնշանակի՝ ռուս-թուրքական երկրորդ խորհրդածոդովի հրավիրման նախաձեռնությունը գալիս է Թուրքիայից, ինչպես որ՝ առաջինի դեպքում: Ժամանակագրական առումով դիվանագիտական գրազրույթունն ընթացել է հետևյալ հաջորդականությամբ: Այն բանից հետո, երբ թուրքական Արևելյան ռազմաճակատի զորքը, խախտելով ռուս-թուրքական պայմանավորվածությունը Սարիղամիշ-Շահթախթի գիծը չանցնելու վերաբերյալ և 1920 թ. հոկտեմբերի 30-ին գրավեց Կարսը, նոյեմբերի սկզբին մոտեցավ Ախուրյանին ու գրավեց նաև Ալեքսանդրապոլը՝ նոյեմբերի 7-ին խորհրդային կառավարությունը հատուկ հրահանգով ժամանակավորապես դադարեցրեց զենքի և այլ տեսակի օգնությունը թուրքերին³⁴: Այդ իսկ պատճառով Անգորայի քեմալական կառավարությունը, զգալով ռուսների բազմաբնույթ օգնության կարիքը հատկապես Արևմտյան ռազմաճակատում հույների դեմ ռազմական ակտիվ գործողություններ ծավալելու համար (հավանաբար, նոյեմբերի կեսերին), Մ. Քեմալը դիմում է խորհրդային կառավարությանը՝ 1920 թ. ամռանը Մոսկվայում ընդհատված խորհրդածոդովը վերսկսելու և իրար հետ բարեկամության պայմանագիր կնքելու: «Խորհրդային Ռուսաստանի ռազմական օգնությունը Թուրքիային և Անդրկովկասի խորհրդայնացումը քեմալականներին մղեց Ռուսաստանի հետ բարեկամական հաշտություն կնքելու անհրաժեշտությանը»³⁵:

ՌԿ(Բ)Կ ԿԿ քաղբյուրոն 1920 թ. նոյեմբերի 27-ի նիստում (թիվ 66 արձանագրություն) կովկասյան գործերի մասին Ստալինի զեկուցման հիման վրա իր համաձայնությունը տվեց Մ. Քեմալի առաջարկությանը Մոսկվայում ռուս-թուրքական խորհրդածոդով հրավիրելու մասին³⁶: Դեկտեմբերի 1-ին Ստալինը Օրջոնիկիձեի միջոցով Մոսկվանուն ուղղված հեռագրում հայտնում է. «Մենք (ՌԿ(Բ) ԿԿ քաղբյուրոն – Ա. Ն.) որոշեցինք համաձայնվել հաշտության կնքմանը, պատվիրակություն կուղարկենք, Չիչերինից կստանան համապատասխան նոտա: Հարկավոր է թուրքերին հետ պահել Բաթումի վրա հարձակվելուց»³⁷:

Կասկած չկա, որ քեմալականներն առաջինը նախաձեռնեցին Ռուսաստանի հետ բանակցելու և պայմանագիր կնքելու առաջարկը, որպեսզի իրավապայմանագրային հիմքերի վրա դնեն Ռուսաստանից ստացվելիք բազմաբնույթ օգնու-

³³ Документы внешней политики СССР (այսուհետև՝ ДВП СССР). Т. 3, М., 1959, с. 371; Г. Г. Азатян. Նշվ. աշխ., էջ 85, Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923), էջ 463–464:

³⁴ Институт марксизма-ленинизма: центральный партийный архив (այսուհետև՝ ИМЛ ЦПА), ф. 64, оп. 2, д. 11.

³⁵ Новейшая история стран Азии и Африки. XX век. Ч. 1, 1900–1945 гг., М., 2003, с. 206.

³⁶ Գ. Ա. Գ ա լ ը յ ա ն. Հայաստանը և մեծ տերությունները..., էջ 404, Политбюро ЦК РКП(б)–БКП(б) повестки дня заседаний. Т. 1, 1919–1929. Каталог, М., 2000, с. 85.

³⁷ Հայաստանի Հանրապետությունը 1918–1920 թթ. (քաղաքական պատմություն), փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 2000, էջ 382:

յունը: Մյուս կողմից էլ խորհրդային կողմն ընդատաջ գնաց թուրքերի առաջարկին, որպեսզի թույլ չտրվի թուրքերի հետագա հարձակումը Բաթումի վրա: Այդ է վկայում Ստալինի դեկտեմբերի 1-ի վերոհիշյալ հեռագիրը:

1920 թ. դեկտեմբերի 9-ին ՌՄՖՍՀ կառավարությունը նոտա է հղում Թուրքիայի կառավարությանը: Նրանում նշվում է, որ «Ռուսական կառավարությունը, ստանալով Թուրքիայի կառավարության առաջարկությունը Մոսկվայում Ռուսաստանի և Թուրքիայի միջև խորհրդաժողովի մասին, ուրախությամբ ողջունում է այդ նախաձեռնությունը»³⁸: Մեկ օր առաջ՝ դեկտեմբերի 8-ին, Գ. Չիչերինն այդ մասին տեղեկացրել էր Բաքու՝ Օրջոնիկիձեին³⁹:

ՌՄՖՍՀ արտաքին գործերի ժողկոմատի 1921 թ. տարեկան հաշվետվության մեջ դարձյալ կարդում ենք. «1920 թ. դեկտեմբերի 9-ին ա. գ. ժողկոմը հաղորդում է Անգորա, որ ուրախությամբ ընդունվել է Թուրքիայի կառավարության առաջարկը Մոսկվայում կոնֆերանս հրավիրելու մասին»⁴⁰: Բերված փաստերը գալիս են հաստատելու, որ Մոսկվայի խորհրդա-թուրքական խորհրդաժողով հրավիրելու նախաձեռնությունը եղել է թուրքական կողմից: Եվ այս իմաստով անտեղի է խորհրդահայ պատմաբանների այն պնդումը, թե իբր խորհրդային կողմն է նախաձեռնել Մոսկվայի խորհրդաժողովը, որպեսզի այնտեղ վերանայվի ու չեղյալ հայտարարվի Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Ճիշտ է նկատել Է. Զոհրաբյանը, որ Մոսկվայի բանակցություններում և պայմանագրում խոսք չկա Ալեքսանդրապոլի պայմանագրի չեղյալ հայտարարելու մասին⁴¹: Անշուշտ, Հայաստանի հեղկոմը 1920 թ. դեկտեմբեր-1921 թ. հունվար ամիսներին Թուրքիայի կառավարությանն ուղղված նոտա-հայտագրերում նման հույս էր փայփայում⁴²: Սակայն դա չարդարացավ: Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման խնդիրը Մոսկվայի բանակցություններում ածանցյալ նշանակություն ուներ: Մեր կարծիքով, խորհրդային կողմին մտահոգում էր ոչ այնքան Ալեքսանդրապոլի պայմանագրի սահմանային ճշգրտումները՝ հոգուտ Հայաստանի, որքան այն, որ Թուրքիան Հայաստանի ներքին գործերին ռազմաիրավական միջամտության հիմքեր չունենա, ինչպիսին որ արձանագրված են Ալեքսանդրապոլի պայմանագրի առանձին հոդվածներում: Խնդիրն այն է, որ Հայաստանին պարտադրված Ալեքսանդրապոլի պայմանագրի մի քանի հոդվածներ՝ 3, 4, 5, 10, 13, քաղաքական առումով, իրոք, Հայաստանի համար նսեմացուցիչ էին, որովհետև դրանք սպառնում էին երկրի պետական ինքնիշխանությանը:

Խորհրդահայ պատմագրության մեջ տարածում գտած և մինչև անգամ մեր օրերում առանձին մոլորյալ հեղինակների կողմից պաշտպանվող անարժեք (մտացածին) փաստարկ-հնարքներից մեկն էլ այն է, երբ ուղղակի կապ են տեսնում 1921 թ. Հայաստանում փետրվարյան ապստամբության և Մոսկվայի բանակցութ-

³⁸ ДВП СССР, с. 371.

³⁹ ИМЛ ЦПА, ф. 85, оп. 14, д. 52, л. 1.

⁴⁰ Геноцид армян. Документы и комментарий. Т. 2, ч. 1, М., 2003, с. 570.

⁴¹ Է. Ա. Զոհրաբյան. Մովետական Ռուսաստանը..., էջ 248:

⁴² ՀԱԱ, ֆ. 4033, ց. 2, գ. 1157, թ. 1:

յուններին հայկական պատվիրակությանը մասնակցել չթույլատրելու միջև: Խորհրդային պատմաբան Ա. Խեյֆեցը գրում է, թե իբր Մոսկվայի խորհրդածողովին պետք է մասնակցեր Հայաստանի ներկայացուցիչ Ալ. Բեկզադյանը, սակայն Երևանը գրավելուց հետո Ս. Վրացյանը հայտարարություն արեց, որ նա իրավունք չունի հանդես գալու Հայաստանի անունից⁴³: Հայ ժողովրդի պատմության բազմահատորյակում ևս նշվում է, որ թուրքերը, օգտագործելով Վրացյանի դիմումը, հրաժարվում են բանակցություններ վարել Հայաստանի պատվիրակության հետ⁴⁴: Այս առնչությամբ Ա. Մնացականյանը պնդում է, թե իբր ռուս-թուրքական «Կոնֆերանսի հանձնաժողովը քննել և նախապատրաստել էր Հայաստանի սահմանների և գաղթած բնակչության վերադարձի բարենպաստ լուծման հարցը: Սակայն հենց կոնֆերանսի բացման օրը (ընդգծումը մերն է – Ա. Ն.) ստացվում է ևս – գույժ, «փրկության կոմիտեի» նախագահի հեռագիրը՝ որով հաղորդվում է, թե Հայաստանի Հեղկոմը տապալվել է և իշխանությունն անցել է «փրկության կոմիտեին», որը պաշտպանում է Ալեքսանդրապոլի դաշնագրի կետերը, և որ Բեկզադյանը և Տեր-Գաբրիելյանը իրավունք չունեն մասնակցելու այդ կոնֆերանսին»⁴⁵: Կեղծ է և իրականությանը չի համապատասխանում նաև գրող Ալ. Շիրվանզադեի պատմած այն դրվագը, թե 1922 թ. Ռապալոյում Ջենովայի խորհրդածողովի ժամանակ խորհրդային պատվիրակ Ալ. Բեկզադյանն իրեն պատմել է, որ իբր խորհրդա-թուրքական մոսկովյան բանակցությունների ժամանակ, երբ իր տեսակցության ժամանակ Չիչերինը համաձայնվել է թուրքերից պահանջել՝ Կարսը, Նախիջևանը և Սուրմալուն Հայաստանին վերադարձնել, հենց այդ պահին ստացվել է Ս. Վրացյանի հեռագիրը, որ Բեկզադյանը չունի որևէ իրավունք բանակցություններ վարելու, և որ դրանից հետո Չիչերինը վրդովվել է, ու իբր ինքը ստիպված էր ձեռնունայն վերադառնալ Կովկաս⁴⁶: Սփյուռքի հեղինակներից Շ. Նաթալին, ձայնակցելով խորհրդահայ պատմաբաններին, դարձյալ գրում է, որ իբր փետրվարյան ապստամբության և Վրացյանի հայտնի հեռագրի հետևանքով Հայաստանի պատվիրակության մասնակցությունը Մոսկվայի խորհրդածողովին խափանվեց⁴⁷: Նման փաստարկները կարելի է անվերջ շարունակել: Մինչդեռ, իրականությունն այն է, որ Ս. Վրացյանի ռադիոգիր-հեռագիրն ուղարկվել է մարտի 12-ին (որոշ տվյալներով մարտի 14-ին)⁴⁸, երբ ռուս-թուրքական խորհրդածողովն արդեն իր եզրափակիչ փուլում էր: Մինչդեռ հայ պատվիրակների մասնակցությունը կոնֆերանսին արգելված է եղել հենց սկզբից՝ փետրվարի 26-ից: Իսկ ինչ վերաբերում է Հայաստանի սահմանների խնդրի ոչ նպաստավոր ընթացքին, ապա պետք

⁴³ А. Н. Хе й фе ц. Советская дипломатия и народы Востока (1921-1927). М., 1966, с. 94.

⁴⁴ Հայ ժողովրդի պատմություն. հ. 7, էջ 140:

⁴⁵ Ա. Ն. Մ ն ա գ ա կ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 71:

⁴⁶ Շ ի Ր Վ ա ն զ ա դ ե. Երկերի ժողովածու, հ. 9, Երևան, 1961, էջ 580, նաև Մ. Ար - գ ո լ մ ա ն յ ա ն. նշվ. աշխ., էջ 381:

⁴⁷ Շ. Ն ա թ ա լ ի. նշվ. աշխ., էջ 11:

⁴⁸ Տե՛ս ՀԱՍ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 55:

է ասել, որ դա սկզբունքորեն լուծված էր դեռ մինչ կոնֆերանսի բացումը՝ բարձր մակարդակի երկկողմ քաղաքական համաձայնության արդյունքում:

Խորհրդահայ պատմագրության մեջ առաջիններից մեկը՝ Է. Ջոհրաբյանը, հենվելով պատմական փաստերի ժամանակագրական օբյեկտիվ մեկնաբանության վրա, ցույց տվեց, որ Ս. Վրացյանի մարտի 12-ի ռադիոհայտարարությունը հետին թվով չէր կարող ազդել փետրվարի 26-ին Հայաստանի պատվիրակության Մոսկվայի բանակցություններին չմասնակցելու հանգամանքի վրա⁴⁹: Այս առնչությամբ պատմաբանը հակադարձ հարցադրում է անում. իսկ ինչո՞ւ մերժվեց Ադրբեջանի պատվիրակության մասնակցությունը⁵⁰: Ս. Վրացյանի մարտի 12-ի հայտնի հեռագրի կապակցությամբ տեղին դիտարկում է անում պրոֆ. Վլ. Ղազախեցյանը՝ նշելով, որ այդ օրերին Հայաստանի փրկության կոմիտեն (ՀՓԿ) տեղյակ չի եղել, որ Բեկզադյանին թույլ չի տրվել մասնակցելու բանակցություններին⁵¹: Բացի այդ, չկա որևէ փաստ, որ թուրքական կողմն օգտագործել է Ս. Վրացյանի սույն հեռագիրը՝ մերժելու համար հայկական պատվիրակության մասնակցությունը: Ճիշտ է նկատել Վլ. Ղազախեցյանը, որ տակավին 1920 թ. դեկտեմբերի սկզբներին՝ խորհրդա-թուրքական խորհրդածողովի նախապատրաստական փուլում, թուրքական կողմը՝ հանձին Ք. Կարաբեքիրի, բացառել էր Հայաստանի մասնակցությունը և Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայումը⁵²: Միսալվում են բոլոր նրանք, ովքեր կարծում են, թե Մոսկվայի պայմանագրով չեղյալ հայտարարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը⁵³: Խորհրդային Ռուսաստանը ոչ միայն չեղյալ չի հայտարարել Ալեքսանդրապոլի պայմանագիրը, այլև տարածքային-սահմանային մասով Մոսկվայի, ապա նաև Կարսի պայմանագրերը եկան վերահաստատելու այն: Այս կապակցությամբ Կ. Պոլսի «Վերջին լուր» թերթը, հաղորդագրություն տպելով թուրքական «Մաբահ» թերթից, նշում է, որ Յուսուֆ Քեմալ բեյը հեռագրել է Անգորա, որ «Կոնֆերանսը ընդունել է Ալեքսանդրապոլի դաշնագիրը: Թուրքիայի սահմանը գծվում է 1920 թ. հունվարի 28-ի Կ. Պոլսի խորհրդարանի ընդունած Ազգային ուխտի համաձայն»⁵⁴: Է. Ջոհրաբյանը և Վլ. Ղազախեցյանը մերժում են խորհրդային պատմագիտական գրականության մեջ դեզերող այն կեղծ դատողությունը, թե իբր Մոսկվայի պայմանագրով չեղյալ համարվեց Ալեքսանդրապոլի պայմանագիրը: Մոսկվայի խորհրդածողովում ոչ մի խոսք չի բացվել Ալեքսանդրապոլի պայմանագրի վերանայման հարցի մասին⁵⁵: Ալեքսանդրա-

⁴⁹ Է. Ա. Ջոհրաբյան. Մովետական Ռուսաստանը..., էջ 213–214:

⁵⁰ Նույն տեղում, էջ 212:

⁵¹ Տե՛ս Վլ. Ղազախեցյան. Հայաստանը 1920–1940 թթ., Երևան, 2006, էջ 59:

⁵² Նույն տեղում, էջ 87:

⁵³ Տե՛ս Ա. Կ. Կեմալ. Նշվ. աշխ., էջ 117, Գ. Ա. Գալոյան. Հայաստանը և մեծ տեղությունները..., էջ 458:

⁵⁴ «Վերջին լուր», 29. III. 1921:

⁵⁵ Է. Ա. Ջոհրաբյան. Մովետական Ռուսաստանը..., էջ 248, Վլ. Ղազախեցյան. նշվ. աշխ., էջ 99:

պոլի պայմանագիրը չեղյալ է համարվել միայն Կարսի պայմանագրով՝ հողված 1-ով⁵⁶:

Խոսելով խորհրդահայ և սփյուռքի շատ հեղինակների կողմից ամենից ավելի շահարկվող՝ դաշնակցականների կազմակերպած փետրվարյան ապստամբության ու Ս. Վրացյանի հայտնի հեռագրերի խաղացած բացասական դերի մասին՝ ապա, մեկ անգամ ևս պետք է նշել, որ թուրք պատվիրակները հայերի հետ հանդիպումների «գլխացավանքից» ազատվելու համար ի սկզբանե դեմ են եղել Հայաստանի ներկայացուցիչների հետ շփումներ ունենալուն, առավել ևս բանակցություններ վարելուն:

Այս առնչությամբ կատարյալ կեղծիք է Շ. Հարությունյանի այն միտքը, թե խորհրդա-թուրքական բանակցությունների ժամանակ թուրքական պատվիրակությունն իբր հայտարարել է, թե ինքը «Հայաստանի ներկայացուցիչ ճանաչում է ոչ թե Հեղկոմին, այլ՝ «փրկության կոմիտեի» ներկայացուցիչն»⁵⁷: Նրանք իրենց մերժումը բացատրում էին ոչ թե Հայաստանում փետրվարյան իշխանափոխությամբ, այլ այն բանով, որ իրենք Անգորայի կառավարության կողմից լիազորված չեն հայերի հետ բանակցելու: Բսկ ինչ վերաբերում է Հայաստանի պատվիրակության գործունեության վրա փետրվարյան ապստամբության խաղացած խանգարիչ դերին, ապա այդ պարագան էական դեր չէր խաղացել, որի մասին վկայում է հենց ինքը՝ Հայաստանի պատվիրակության ղեկավար Ալ. Բեկզադյանը: 1921 թ. մարտի 18-ին նա Բաքվում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Ս. Աթաբեկյանին ուղղած նամակում գրում էր, որ այդ հանգամանքը «որոշ անհարմար վիճակ ստեղծեց Հայաստանի պատվիրակության համար»⁵⁸: Մոսկվայի բանակցություններին չմասնակցած Ալ. Բեկզադյանի ասածից ստացվում է, որ փետրվարյան ապստամբությամբ խորհրդային իշխանության ժամանակավոր տապալման պարագան չէր գլխավորը, որ Հայաստանը և հայ պատվիրակությունը հաջողություն չունեցան: Որպես հակափաստարկ՝ այստեղ կարելի է ընթերցողի ուշադրությունը հրավիրել մեկ այլ հանգամանքի վրա: Բանն այն է, որ ՀՓԿ իշխանությունը տարածվում էր միայն Հայաստանի մի մասի վրա: Այս իշխանության կողքին Հայաստանում շարունակում էին գործել երկու հեղկոմներ՝ մեկը Ղամարլու-Վեդիում՝ ի դեմս Ս. Կասյանի, մյուսը՝ Դիլիջանում՝ չեկիստ Գ. Աթաբեկյանի: Եվ ցանկության դեպքում խորհրդաժողովը կարող էր ճանաչել Խորհրդային Հայաստանի պատվիրակության իրավասությունը, հետևապես և թույլ տար մասնակցելու խորհրդաժողովին⁵⁹: Մակայն կողմերը նման խնդրի քննարկման անհրաժեշտություն չեն զգացել, որովհետև Ալ. Բեկզադյանի մասնակցությունը խորհրդաժողովին ոչ միայն ցանկալի չէր, այլև՝ ավելորդ: Բայց պետք է ենթադրել, որ եթե անգամ Հայաստանի պատվիրակությանը թեկուզ թույլատրվեր մասնակցել Մոսկվայի խորհրդաժողովին, միևնույն է, այդ մասնակցությունը գործնական նշանա-

⁵⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 13, թ. 106:

⁵⁷ Շ. Ռ. Հ ա ր ո լ թ յ ո լ ն յ ա ն. Հայ ժողովրդի պատմություն (1917–1968), հ. 4, էջ 141:

⁵⁸ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 68, թ. 25, գ. 319, թ. 22:

⁵⁹ Հայոց պատմություն 1900–1939 թթ., Երևան, 1993, էջ 202–203:

կույություն չէր ունենա այնպես, ինչպես որ չունեցավ հետագայում՝ Կարսի բանակ-
ցությունների ժամանակ:

Այսպիսով, հանրագումարի բերելով վերը նշված փաստերը, կարելի է համա-
ձայնվել Ալ. Բեկզադյանի արտահայտած կարծիքին և եզրակացնել, որ 1921 թ. փետրվարյան ապստամբությունը և ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի հեռագրերը ո-
րոշ, բայց ոչ էական դեր խաղացել են ռուս-թուրքական բանակցություններում՝
ստեղծելով քաղաքական ոչ նպաստավոր մթնոլորտ Հայկական հարցի լուծման
խնդրում:

Մյուս կողմից, անշուշտ, դատապարտելի է և պատմաքաղաքական ու բարոյա-
կան որևէ արդարացում չի կարող ունենալ 1921 թ. փետրվարյան ապստամբու-
թյան շրջանում ՀՓԿ նախագահ Ս. Վրացյանի, Ռ. Դարբինյանի խմբագրած «Ազատ
Հայաստանի» թուրքասիրական հայտարարություններն այն մասին, որով հավա-
տարմություն էր արտահայտվում Ալեքսանդրապոլի պայմանագրին⁶⁰:

Մոսկվայի խորհրդածոդովում Հայաստանի տարածքային-սահմանային
խնդրի ոչ հայանպաստ լուծման հայ պատմագիտության էժանագին հնարքների
թվին կարելի է դասել Խորհրդային Ռուսաստանի տնտեսական ու ռազմաքաղա-
քական ծանր դրության մասին ակնարկները՝ 1921 թ. Կրոնշտադտի խռովությու-
նը, Պոլովժեի և Ուկրաինայի «կուլակային» խռովությունները, պարենային և վա-
ռելիքային ճգնաժամը, ՌԿ(բ)Կ շարքերում ներկուսակցական բանավեճերը և
այլն⁶¹: Առավել ևս անտեղի է այն համեմատությունը, երբ որոշ հեղինակներ 1921
թ. Մոսկվայի խորհրդա-թուրքական բանակցությունները նմանեցնում են երկ-
րորդ Բրեստի հետ⁶²: Ներքին ու միջազգային հարաբերությունների տեսակետից
օտարերկրյա ինտերվենցիայի և քաղաքացիական պատերազմից հաղթականո-
րեն դուրս եկած Խորհրդային Ռուսաստանը 1921 թ. անհամեմատելի էր 1918 թ.
նորահռչակ Խորհրդային Ռուսաստանի հետ:

Բրականում Մոսկվայի ռուս-թուրքական խորհրդածոդովի արդյունքում
կնքված ոչ հայանպաստ պայմանագրի գլխավոր դրդապատճառն այն էր, որ Ռու-
սաստանը, հանուն փոքրիկ և իրենից առանձնապես տնտեսական ու քաղաքա-
կան որևէ հետաքրքրություն չներկայացնող Հայաստանի, չէր կարող նեղացնել
«մուսուլմանական Արևելքի հեղափոխության միջնաբերդ Թուրքիային»: Ավելին,
ՌԿ(բ)Կ ԿԿ քաղբյուրոն և ՌՄՖՄՀ կառավարությունը 1921 թ. ամռանը չկամեցան
Հայաստանի օգտին լուծել անգամ Լեռնային Ղարաբաղի հարցը, որը խորհրդային
պետության համար, փաստորեն, ներքին խնդիր էր: Հիշեցնենք, որ այդ ժամանակ
այլևս չկային ոչ փետրվարյան ապստամբության վտանգը, ոչ Վրացյանի սադրիչ
հեռագրերը, ոչ Կրոնշտադտի խռովությունը, Վրաստանն արդեն խորհրդայնացել
էր, իսկ ամբողջ երկիրն էլ անցում էր կատարել հեռանկար խոստացող ՆԷՊ-ին:
Բայց այս անգամ էլ ստացվեց այնպես, որ կուսակցության ղեկավար մարմինները

⁶⁰ ՀԱՍ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թթ. 51, 65, ֆ. 113, ց. 3, գ. 42, թ. 96, «Ազատ Հայաստան», 20. III. 1921:

⁶¹ Է. Ա. Զ ո ի ա բ յ ա ն. Մովետական Ռուսաստանը..., էջ 233-234:

⁶² Տե՛ս Գ. Գ ա լ ո յ ա ն. Հայաստանը և մեծ տերությունները..., էջ 455, Р. К а з а н д ж я н. К
вопросу об оценке..., с. 117.

Ղարաբաղի հարցը լուծեցին Ադրբեջանի օգտին՝ պատմական, էթնիկական հատկանիշը գոհաբերելով, այսպես կոչված, տնտեսական կապի գործոնին: Այստեղ էլ նախապատվությունը տրվեց Ադրբեջանին, քանզի վերջինս նավթային գործոնի և մուսուլմանական Արևելքի հետ կապվելու տեսակետից Մոսկվայի համար ավելի մեծ արժեք ուներ: Տեղին է նշել, որ Թուրքիային ու Ադրբեջանին արված նվիրատվությունների գործում քիչ ծառայություններ չեն մատուցել նաև հայ բոլշևիկները, որոնք ամենից շատ էին տառապում համաշխարհային հեղափոխության ախտով:

Միանգամայն անհիմն է մինչ օրս հայ պատմագրության մեջ դեգերող այն պնդումը, թե Մոսկվայի բանակցություններում բուռն վեճեր են եղել Հայաստանի խնդրի շուրջ և որ միայն թուրք պատվիրակների անզիջողականության հետևանքով հնարավոր չեղավ խնդրին հայանպաստ լուծում տալ: Նման պնդման համար հիմք է Գ. Չիչերինի ապրիլի 21-ի նամակը՝ հասցեագրված Մոսկվայում ՀՍԽՀ ներկայացուցիչ Ս. Տեր-Գաբրիելյանին՝ որպես պատասխան Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ալ. Բեկզադյանի կողմից ապրիլի 15-ին Գ. Չիչերինին ուղղված բողոք-հայտարարությանը: Չիչերինը, փորձելով արդարացնել ռուսական պատվիրակության քայլը՝ հայկական տարածքները թուրքերին հանձնելը, ինքն էլ ընկել է հակասության մեջ: Նա մի կողմից նշում է, որ սահմանային խնդրում կողմերի միջև ընթացել է երկար ու անողորմ պայքար, իսկ մյուս կողմից փաստում, որ դեռ նախապես՝ մինչև խորհրդածողովի սկսվելը, կուսակցության ԿԿ-ն, քաղբյուրոն, բարձրագույն ղեկավար գործիչները սկզբունքային համաձայնության էին եկել թուրքերի հետ, որ իրենք ճանաչում են «Ազգային ուխտը», և որ Թուրքիան տարածքային կորուստներ չի ունենա: Այստեղից հարց է ծագում, որ եթե կոմունիստական կուսակցության բարձրագույն ղեկավարությունը՝ այդ թվում Վ. Լենինը, Բ. Ստալինը, սկզբունքորեն ընդունել էին թուրքական «Ազգային ուխտը», այսինքն՝ հայկական տարածքների կորուստը, ապա էլ ինչ խոսք կարող է լինել կողմերի միջև բանակցային անհաշտ պայքարի մասին:

Գ. Չիչերինն անձամբ խոստովանում էր, որ Հայկական հարցում տեղի է ունեցել անդրկուլիսային բանակցություններ, որոնցում էլ որոշվել է Հայաստանի տարածքային-սահմանային հարցը: Չիչերինի վկայությամբ քաղաքական հանձնաժողովը սահմանային խնդրին անդրադարձել է այն ժամանակ (մարտի 10-ին), երբ բուն բանակցությունները կողմերի միջև սկսվել էին համարյա երկու շաբաթ առաջ, և այդ ընթացքում բոլոր սկզբունքային հարցերը (տարածքային-սահմանային զիջումներ) արդեն լուծվել էին ՌԿ(Բ)Կ ԿԿ-ի համապատասխան որոշումներով և ղեկավար ընկերների աջակցությամբ⁶³: Ավելին, դեռ 1921 թ. հունվարին, երբ Թուրքիայի արտաքին գործերի ժողկոմի պաշտոնակատար Ահմեդ Մուխթարը, նախապես ցանկանալով պարզել Խորհրդային Ռուսաստանի տրամադրությունը Հայաստանի օգտին հնարավոր տարածքային զիջումներ պահանջելու խնդրում, թուրքական կողմը՝ հանձին Մոսկվայում Թուրքիայի նորանշանակ դեսպան Ալի Ֆուադ (Ջեբետյ) փաշայի, Թուրքիայում ՌՄՖՍՀ-ի լիազոր ներկայացուցիչ Բ.

⁶³ Стéú Е. С ар к и с я н. Նշվ. հոդվ., էջ 82:

Մղիվանուց պաշտոնապես ստացել է հավաստիացում, որ «Խոսք չի կարող լինել Թուրքիայի կողմից Հայաստանին տարածքային զիջումների մասին»⁶⁴: Մի խոսքով, մինչև Մոսկվա գալը և բանակցություններ սկսելը թուրք պատվիրակությունը վստահ էր, որ Ռուսաստանը Հայաստանի օգտին տարածքային զիջումներ չի պահանջի: Խորհրդաժողովի նախօրյակին՝ փետրվարի 23-ին և 26-ին, Բ. Ստալինը և Վ. Լենինն ընդունել են թուրքական պատվիրակությանը և հավաստիացրել, որ բանակցությունների ժամանակ չի շոշափվի Հայկական հարցը: Հայկական հարցը քննարկման նյութ չդարձնելու գործում իրենց բացասական դերն են խաղացել Ադրբեջանի հեղկոմի նախագահ Ն. Նարիմանովի 1921 թ. փետրվարի 16-ի և 21-ի հայտնի նամակները՝ ուղղված Լենինին, որոնցում նա Հայկական հարցը դիտում էր թուրքերի համար կյանքի և մահվան հարց⁶⁵:

Միաժամանակ ճշմարտությունը պահանջում է ասել, որ նախաբանակցային փուլում խորհրդային պետության ղեկավարներից թերևս միայն արտաքին գործերի ժողովուրդ Գ. Չիչերինն էր պնդում իր նախկին տեսակետը, այն է՝ թուրքերից պահանջել Վանի, Բիթլիսի, Մուշի շրջանները և 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Հայաստանից զավթած տարածքները⁶⁶: Սակայն Չիչերինի այս մոտեցումը մերժվում է ոչ միայն թուրք պատվիրակների, այլև՝ խորհրդային պետության բարձրագույն ղեկավարներ Վ. Լենինի, Բ. Ստալինի և մյուսների կողմից: Այս կապակցությամբ 1921 թ. փետրվարի 12-ին Բ. Ստալինը Վ. Լենինին ուղղած նամակում Չիչերինի այդ պահանջը որակել է հիմար և սադրիչ, որը միայն ջուր է լցնում հայ ազգայնականների ջրաղացին⁶⁷: Մի խոսքով, խորհրդաժողովը դեռ չսկսված՝ Չիչերինի հայանպաստ մոտեցումը իսկույն վերանում է, և բանակցությունների ամբողջ ընթացքում թուրք պատվիրակներին վստահություն է ներշնչել նաև արտաքին գործերի ժողովուրդ Գ. Չիչերինը⁶⁸:

Որ Հայաստանի տարածքային-սահմանային խնդրում բանակցությունների ժամանակ լուրջ վեճ չի եղել, վկայում է Ալ. Բեկզադյանը: Նա, ծանոթանալով ռուս-թուրքական խորհրդաժողովի նիստերի արձանագրություններին, 1921 թ. ապրիլի 15-ին Չիչերինին ուղղած նամակ-բողոքում գրում է. «Ամենից առաջ աչք է ծակում այն խոշոր տարածքային զիջումները Թուրքիային, որ արել է ռուսական պատվիրակությունը խորհրդային Հայաստանի հաշվին... և ՌՄՖՍՀ ներկայացուցիչները գրեթե ոչ մի փորձ չեն արել պաշտպանելու երիտասարդ և փոքրիկ Խ. Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածքները»⁶⁹:

Բնչ վերաբերում է բանակցությունների ընթացքում տարածքային-սահմանային խնդրում Չիչերինի ակնարկած բուռն քննարկումներին՝ «ամենադաժան երկարատև պայքարին», ապա դա, մեր կարծիքով, Չիչերինի դիվանագիտական

⁶⁴ ДВП СССР, с. 469; Геноцид армян..., с. 362.

⁶⁵ Տե՛ս Գеноцид армян..., с. 378 и 387; «Գարուն», 1989, թիվ 4, էջ 50–51:

⁶⁶ Գ. Լ. Մ. զ. յ. ն. նշվ. աշխ., էջ 243:

⁶⁷ ИМЛ ЦПА, ф. 3, оп. 1, д. 5214, л. 2.

⁶⁸ Գ. Ա. Գ. Մ. լ. յ. ն. Հայաստանը և մեծ տերությունները..., էջ 441:

⁶⁹ Геноцид армян..., с. 494; “Голос Армении”, 15. III. 2001.

հնարքն է պայմանագրի ստորագրումից հետո հայերին (Բեկզադյանի բողոքին ի պատասխան) հանգստացնելու համար, որ իբր սահմանային հարցերը լուծվել են կատաղի բանավեճերով, քայլ առ քայլ, փոխզիջումներով: Սակայն իրականում նման բան չի եղել: Խորհրդաժողովի ընթացքում քիչ թե շատ միակ լուրջ վեճը ծագել է Բաթումի խնդրի շուրջ: Թուրքիան ակնհայտ հավակնություն ուներ նաև Բաթումի նկատմամբ, քանի որ այն ևս «Ազգային ուխտի» պահանջների շրջանակում էր: 1920 թ. վերջերից Խորհրդային Ռուսաստանն անհանգստացած էր Բաթումի համար, որովհետև անմիջական սպառնալիք կար թուրքերի, նաև մտավախություն՝ Անտանտի կողմից այն գրավելու ուղղությամբ:

Ի վերջո, կարելի է ասել, որ Բաթումի խնդիրը լուծվեց փոխատեղության եղանակով: «Ազգային ուխտի» մաս կազմող Բաթումն իր շրջակայքով անցավ Խորհրդային Վրաստանին, իսկ դրա փոխարեն «Ազգային ուխտի» տարածքային շրջանակներից դուրս և երբեք Օսմանյան Թուրքիայի մեջ չմտած Սուրմալուի գավառը՝ Հայոց խորհրդանիշ Մասիս լեռով, հանձնվեց Թուրքիային: Այսինքն՝ հայկական Սուրմալուի գավառի հաշվին Վրաստանը փոխհատուցում ստացավ Բաթումը: Մոսկվայի բանակցությունների անդամ Ալի Ֆուադ փաշան իր հուշերում գրում է, որ մարտի սկզբներին բանակցությունների ընթացքում մենք Բաթումը զիջելու դիմաց պահանջեցինք երկարաձգել մեր սահմանները Կարսից արևելք՝ մինչև Արաքս և Արփաչայ գետերի հունի ամբողջ երկարությամբ: Այդպես էլ արվեց: Դրանով ապահովվեց մեր անվտանգությունն այդ ուղղությամբ և միաժամանակ զգալի կտոր հողատարածք միացվեց մեր երկրին⁷⁰: Ինչպես տեսնում ենք, կողմերի միջև պարզապես տարածքային առևտուր է ընթացել դարձյալ ի վնաս Հայաստանի:

Այս կապակցությամբ քննադատության չի դիմանում Ռ. Ղազանջյանի այն եզրահանգումը, թե Մոսկվայի պայմանագրով Թուրքիան ստացավ ավելի քիչ տարածք, քան նախատեսված էր «Ազգային ուխտով»⁷¹: Իրականում այս պայմանագրով Թուրքիան ոչ միայն տարածքային որևէ կորուստ չունեցավ, այլև ստացավ Սուրմալուի գավառը, որը չէր մտնում թուրքական «Ազգային ուխտի» մեջ, էլ չենք ասում, որ նա բռնազավթեց նաև Նախիջևանը և պահանջեց այն հանձնել իր կրտսեր եղբորը՝ Ադրբեջանին, պայմանով, որ այն չզիջվի մի երրորդ պետության, այսինքն՝ Հայաստանին: Ըստ արժանվույն գնահատելով հետագոտող Ռ. Ղազանջյանի պրպտուն աշխատանքը խնդրո առարկա թեմայի շուրջ և հաճախ չկիսելով նրա մոտեցումներն ու տեսակետները շատ հարցերի վերաբերյալ՝ այդուհանդերձ, անուրանալի է այն փաստը, որ հեղինակն իր բազմաթիվ հրապարակումներով գիտական շրջանառության մեջ է դրել նախկինում հանրությանն անհայտ, գաղտնագերծված զգալի թվով արխիվային փաստաթղթեր: Մեր կարծիքով՝ վերջին տարիներին Ռ. Ղազանջյանի կատարած պատմագիտական ամենաարժեքավոր նորույթն այն է, որ արխիվային հիմնավոր փաստաթղթերի հիման վրա բացահայտեց, որ Մոսկվայի ռուս-թուրքական պայմանագիրը ստորագրվել է

⁷⁰ Геноцид армян..., с. 418.

⁷¹ Р. К а з а н д ж я н. К вопросу об оценке..., с. 115.

ոչ թե մարտի 16-ին՝ անգլո-ռուսական առևտրատնտեսական համաձայնագրի կնքման օրը, այլ որոշակի նկատառումներով երկու օր ուշ՝ մարտի 18-ին, բայց պայմանագրի վրա հետին թվով պաշտոնապես նշվել է մարտի 16-ը⁷²:

Այսպիսով, ամփոփելով Մոսկվայի խորհրդածոդովի արդյունքները և դրանց տրված պատմագիտական գնահատականը՝ կարելի է փաստել, որ ռուսական պատվիրակությունը երկրի բարձրագույն ղեկավարության հրահանգով, առանց որևէ լուրջ քննարկման ու բանավեճի, Թուրքիային է հանձնել Կարսը, Արդահանը, Արդվինը և Սուրմալուն, էլ չենք խոսում Նախիջևանի ճակատագրի մասին: Արդյունքում՝ Մոսկվայի պայմանագրով Հայաստանը կորցրեց ավելի քան 25 հազ. կմ² տարածք, որից 19,915 հազ. կմ² խլեց Թուրքիան: Իսկ 5,5 հազ. կմ² կազմող Նախիջևանի մարզը և Շարուրը Թուրքիայի ճնշմամբ հանձնվեց Ադրբեջանին⁷³:

Ստացվեց այնպես, որ Մոսկվայի պայմանագրով բոլոր հարևան երկրները շահեցին. Թուրքիան լրացուցիչ ստացավ Կարսը, Արդահանը, Արդվինը և Սուրմալուն, Ադրբեջանը՝ Նախիջևանի մարզը, Վրաստանը՝ Բաթումը, իսկ Հայաստանը միայն տարածքներ կորցրեց: «Մոսկվայի պայմանագրով, – գրում էր Թուրքիայում Ռուսաստանի դեսպան Ս. Արալովը իր հուշերում, – մեր կողմից Կարսի մարզի հանձնումը Թուրքիային բարոյապես բարձրացրեց թուրքական ժողովրդի ոգին, նրան հանգստություն ներշնչեց արևելյան սահմանների համար և վստահություն այն մասին, որ Խորհրդային Ռուսաստանը հեղափոխական Թուրքիայի բարի հարևանն է ու նրա անկեղծ բարեկամը»⁷⁴:

Ահա այսպես «լուծվեց» XX դարի մեծագույն բռնակալներից մեկի՝ Ի. Ստալինի, հեզնական խոսքերով ասած «այսպես կոչված Հայկական հարցը»⁷⁵: Մոսկվայի պայմանագրի կնքումը թուրքերի համար ունեցավ ռազմաքաղաքական այն նշանակությունը, որ ապահովեց Թուրքիայի թիկունքն արևելքում և հնարավորություն ընձեռեց արևելյան ճակատում տեղակայված թուրքական բանակին տեղափոխվել արևմտյան ճակատ ու ապահովել նրա վերջնական հաղթանակը Հունաստանի դեմ: Էլ չենք խոսում Ռուսաստանի՝ Թուրքիային ցույց տված վիթխարի ռազմական, նյութական, ֆինանսական և դիվանագիտական օգնության մասին:

Մարքս-լենինյան մենաշնորհ աշխարհայացքի, խորհրդային պատմագիտության մեթոդաբանության և կոմունիստական ամբողջատիրության պայմաններում հասկանալ կարելի է Է. Չոհրաբյանին, որը Մոսկվայի «եղբայրության և բարեկամության մասին» խորհրդա-թուրքական պայմանագիրը համարել է «սովետական դիվանագիտության խոշոր ներդրումը»⁷⁶: Ավելի ուշ արդեն, նոր պայմաններում Է. Չոհրաբյանը իրավացիորեն Մոսկվայի պայմանագիրը որակում է որպես գոր-

⁷² Р. К а з а н д ж я н. К вопросу о датировке Московского советско-турецкого договора 1921 г.– ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1999, № 1, էջ 175–179:

⁷³ Бюллетень Центрального статистического управления, М., 1921, № 55, с. 10.

⁷⁴ С. И. А р а л о в. Воспоминания советского дипломата. 1922–1923. М., 1960, с. 213.

⁷⁵ «Правда», 4.XII.1920.

⁷⁶ Է. Ս. Չ ո հ ր ա բ յ ա ն. Սովետական Ռուսաստանը..., էջ 234:

ծարք⁷⁷: Այն գործարք են համարել ակադեմիկոս Լ. Խուրշուդյանը, Ե. Մարգայանը և ուրիշներ: Մոսկվայի պայմանագիրը գործարք էր համարվում երկու հանգամանքով. մեկ, որ Մոսկվան հայկական հողերի հաշվին տարածքային զիջումներ կատարեց քեմալականներին, որպեսզի կանխեն նրանց հնարավոր անցումն Անտանտի կողմը և երկրորդ՝ Հայաստանի տարածքային-սահմանային հարցը լուծվում էր առանց նրա ներկայացուցիչների գիտության ու մասնակցության: Եվ այս իմաստով Մոսկվայի պայմանագիրը իբրև նախատիպ, նմանություն ու ընդհանրություն ունի 1939 թ. օգոստոս-սեպտեմբերի խորհրդա-գերմանական գաղտնի պայմանագիր-արձանագրությունների հետ: Այդպիսով, առանց վարանելու կարելի է փաստել, որ Մոսկվայի պայմանագրով Հայաստանն անդամահատեցին ու իրար միջև բաժանեցին Խորհրդային Ռուսաստանը և Թուրքիան:

Ինչ վերաբերում է Կարսի պայմանագրին, ապա այն Մոսկվայի գործնական կրկնությունն էր, այս անգամ՝ Թուրքիայի և Անդրկովկասյան հանրապետությունների միջև: Ինչպես խոստովանել է Խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ, Կարսի խորհրդածոդովի մասնակից Յա. Գանեցկին, «Կոնֆերանսի ընթացքը կանխորոշված էր դեռ Մոսկվայի կոնֆերանսում»⁷⁸: Այդ իսկ պատճառով պատմագիտական առումով քննել ու գնահատել Մոսկվայի պայմանագիրը, ըստ էության, նշանակում է գնահատել նաև Կարսի պայմանագիրը:

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, հայ պատմագրության մեջ բավականաչափ անդրադարձ է եղել հայ ժողովրդի համար ճակատագրական նշանակություն ունեցող Ալեքսանդրապոլի, Մոսկվայի և Կարսի պայմանագրերին, անարդար և բռնի ուժով հայ ժողովրդին պարտադրված պայմանագրեր, որոնց միջև կա ներքին օրգանական կապ, և կարծես դրանք իրար շարունակություն լինեն: Այդ ընթացքում հայ պատմագրության մեջ հավաքվել ու շրջանառվել է խնդրին առնչվող հսկայական փաստական նյութ: Սակայն խորհրդային և սփյուռքի պատմագիտական գրականության մեջ այդ պայմանագրերին տրվել են ոչ միանշանակ, երբեմն հակասական մեկնաբանություններ ու գնահատականներ: Հետխորհրդային պատմագրությունն աստիճանաբար ճշգրտում, վերագնահատում և հստակեցնում է Հայաստանի ու հայ ժողովրդի համար քաղաքական արդիական նշանակություն ունեցող այդ պայմանագրերի պատմության հարցերը:

⁷⁷ Է. Ա. Ջ ո հ ր ա բ յ ա ն. 1920 թ. թուրք-հայկական պատերազմը և տերությունները, էջ 358:

⁷⁸ «Խորհրդային Հայաստան», 18. X. 1921:

ОСВЕЩЕНИЕ АЛЕКСАНДРОПОЛЬСКОГО, МОСКОВСКОГО И КАРССКОГО
ДОГОВОРОВ В АРМЯНСКОЙ ИСТОРИОГРАФИИ

ARARAT AKOPYAN

Р е з ю м е

В истории армянского народа имеют судьбоносное значение Александропольский (1920 г.), Московский и Карсский (1921 г.) договоры, внутренне органически связанные между собой и являющиеся как бы продолжением друг друга. В историографической литературе советских и зарубежных армян этим договорам даны неоднозначные и даже противоречивые оценки. С течением времени был собран и вовлечен в научный оборот огромный фактический материал, связанный с этой проблемой. Уже в постсоветской историографии постепенно уточняются суть и содержание этих договоров, которые и ныне не потеряли своего политического значения для Армении и армянского народа.

THE CORRECT INTERPRETATION OF THE FACTS OF THE ALEXANDROPOL, THE
MOSCOW AND THE KARS TREATIES IN THE ARMENIAN HISTORIOGRAPHY

ARARAT HAKOBYAN

S u m m a r y

In the history of the Armenian people the Alexandropol (1920), the Moscow and the Kars (1921) treaties have fateful meaning. There is inner and fundamental connection between these treaties and they are as if continuation of each other. In the historiographical literature of the Soviet and foreign Armenians these treaties are given non-synonymous and even contradictory marks. Eventually a great number of facts were gathered connected with this problem and drawn into scientific use. The essence and content of these treaties were gradually verified and they became more distinct in the post-Soviet historiography. These treaties haven't lost their political meaning for Armenia and Armenian nation, even nowadays.